

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 22-ին ժամը 9:30-ից 17:00-ն կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝

Ասատրյան Լիլիթ	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
Ենգիբարյան Վիկտոր	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
Չաղոյան Կարեն	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
Խաչատրյան Լիա	«Զարգացում և ինտեգրացիա» ՀԿ
Հովհաննիսյան Միհրան	«Եղվարդ» ՋՕԸ
Մախյան Նարինե	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
Մովսիսյան Կարինե	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
Միքայելյան Շիրակ	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
Նազարյան Հազարապետ	«Եղեգնաձոր» ՋՕԸ
Շահինյան Պողոս	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
Ոսկանյան Արման	«Տավուշի զարգացման» ՀԿ
Վերանյան Անդրանիկ	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
Տեր-Հովակիմյան Ալեքսանդր	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
Ղազարյան Տոնակյան	«Շենիկ» ՋՕԸ

Նիստից բացակայում էին.

Համբարձումյան Սասուն «Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Հերմինե Դիլանյան	Ոռոգման ենթակառուցվածքի ինժեներ
Լևոն Բարսեղյան	«Ասպարեզ» ժուռնալիստների ակումբ ՀԿ
Թամարա Արարամյան	«Արագա» ՀԿ

Համաձայն ՇԽ կանոնակարգի առաջարկվող նախագծի՝ նիստը նախագահելու համար առաջադրվեց Ա. Վերանյանի թեկնածությունը և հաստատվեց միաձայն:

Նախագահողը ներկայացրեց օրակարգը և առաջարկեց հաստատել այն: Քննարկման արդյունքում օրակարգը հաստատվեց հետևյալ ձևակերպմամբ՝

1. ՇԽ հասարակայնության հետ աշխատանքների գրաֆիկի հաստատում
2. ՇԽ Կանոնակարգի նախագծի ներկայացում և հաստատում
3. ՇԽ աշխատանքային պլանի վերջնական նախագծի ներկայացում և հաստատում

4. ՇԽ անդամի դերը և հնարավոր ներդրումը ՀՄՀ-Հայաստան ծրագրին առաջիկա մեկ տարվա ընթացքում
5. Այլ հարցեր

Վարման կարգի վերաբերյալ ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանն առաջարկեց հետևյալ ձևաչափը՝

ներկայացում, կարծքների փոխանակում, առաջարկություններ և քվեարկություն:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ հասարակայության հետ կապերի հանձնաժողովի անդամ Վ. Ենգիբարյանը և ներկայացրեց հասարակայնության հետ կապերի հետ աշխատանքի հետևյալ կետերը՝

- ՇԽ նախագահողի դերը ՁԼՄ-ների հետ աշխատանքների համակարգման գործում.
- ՇԽ անդամների դերը մարզային բնակչության իրազեկման գործում /ամենօրյա աշխատանք, կայք, հատուկ ծրագրեր/.
- Վերապատրաստողական համագործակցություն ՁԼՄ-ների հետ.
- ՇԽ անդամ կազմակերպությունների մասին տեղեկատվություն.
- ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրականացրած ծրագրերից ֆիլմի պատրաստում /2-3/, տեղադրում mca.am կայքում.
- Հղում ՇԽ անդամ կազմակերպությունների կայքերում.
- Արտագնա մամուլի ասուլիս այնպիսի վայրում, որտեղ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը իրականացրել է ծրագիր.
- Ընդլայնված հանդիպում քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչների հետ, որոնց քվեի շնորհիվ մենք ընդգրկվել ենք ՇԽ կազմում.
- Հատուկ ծրագրի առաջարկ ՀՄՀ-Հայաստան ծրագրի դերը Հայաստանի Եվրոպական Համամերձեցմամբ գործում, կոնֆերանս, համագործակցություն ԵՄ կառույցների հետ:

Ներկայացման վերաբերյալ հնչեցին մի շարք առաջարկություններ՝

Նիստի նախագահող Ա. Վերանյանը ողջունեց գործողությունների ներկայացված պլան և առաջարկեց ընդլայնել ծրագրի իրազեկման աշխատանքները՝ օգտագործելով անհատական կապերը մարզերում: Ա. Վերանյանն առաջարկեց նաև նախագահողի՝ որպես ՁԼՄ-ների հետ հաղորդակցվող ներկայացուցչի դերի մասին նշել ՇԽ նիստերի մամուլ հաղորդակցություններում և ՁԼՄ ներկայացուցիչներին հրավիրել 10 րոպե շուտ:

Հրավիրյալ Թ. Աբրահամյանն առաջարկեց կազմակերպել ծրագրի առնչվող նյութերի բաժանում մարզային կենտրոններին, հետաքրքրված ՀԿ-ներին:

Վերոնշյալի կապակցությամբ ՇԽ անդամ Հ. Նազարյանն առաջարկեց ընդգրկել ՋՕԸ-երին որպես գյուղական բնակչության հետ կապի ապահովման մեխանիզմ:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի տեղեկատվության տարածման գործում աջակցության պատրաստակամություն հայտնեցին համապատասխանաբար Վայոց Ձոր և Սյունիք

մարզերը ներկայացնող ՇԽ անդամներ Շ. Միքայելյանը և Կ. Մովսէսյանը՝ իրենց կազմակերպությունների հենքի և հնարավորությունների օգտագործման միջոցով:

ՇԽ անդամ Լ. Ասատրյանի առաջարկությունը վերաբերում էր ՁԼՄ-ների հետ աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը, մասնավորապես, յուրաքանչյուր ՇԽ նիստից առաջ մամլո հաղորդագրությունների կազմում և տարածում:

ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանն առաջարկեց մշակել ՁԼՄ-ների հետ հաղորդակցության և համագործակցության սկզբունքներ:

Հրավիրյան Լ. Բարսեղյանը խոսեց ՇԽ մամլո խոսնակ ունենալու առաջարկության վերաբերյալ. նշեց, որ այդ պարագայում պետք է ապահովել, որ մյուս ՇԽ անդամների արտահայտվելու հնարավորությունները չսահմանափակվեն: Լ. Բարսեղյանը պաշտոնապես հայտարարեց, որ ՇԽ անդամները իրենց տեղեկատվական նյութերը կազմելիս կարող են օգտվել «Ասպարեզ» ժուռնալիստների ակումբի կողմից պատրաստված ֆիլմից:

Վերջում, ամփոփելով բոլոր առաջարկությունները՝ հանդես եկավ ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանը և առաջարկեց ի գիտություն ընդունել հանձնախմբի կողմից մշակված միջոցառումների ցանկը, հանձնարարել խմբին կազմել դրանից բխող հստակ գործողությունների պլան, առանձնացնել թիրախ խմբերը և պատասխանատուները, սահմանել հստակ ժամկետներ: Հանձնարարականի կատարման ժամկետ սահմանվեց մինչև դեկտեմբերի 15-ը:

Վերոնշյալ առաջարկությունը դրվեց քվեարկության և հաստատվեց միաձայն:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

Առաջարկություն եղավ ՇԽ կանոնակարգի ներկայացումը, քննարկումն ու քվեարկությունն իրականացնել առանձին բաժիններով/գլուխներով (Ա. Տեր-Հովակիմյան): ՇԽ անդամները համաձայնեցին:

Կանոնակարգի լրամշակված տարբերակը ներկայացնելու համար ձայնը տրվեց ՇԽ անդամ, ՇԽ կանոնակարգի լրամշակման հանձնախմբի համակարգող Կ. Ջաղոյանին: Կ. Ջաղոյանը նշեց, որ Կանոնակարգի վերաբերյալ ներկայացված բոլոր առաջարկություններն ընդունվել են, բացառությամբ նրանց, որոնց շուրջ միակարծություն չի եղել:

Կանոնակարգի առանձին բաժինների շուրջ քննարկումները և քվեարկության արդյունքները ներկայացվում են ստորև.

1. ՇԽ առաքելությունը

Դիտողություններ չեղան և հաստատվեց միաձայն: Ներկա էին 11 ՇԽ անդամ:

2. ՇԽ կանոնակարգ

Դիտողություններ չեղան և հաստատվեց 9 կողմ և 2 ձեռնպահ ձայներով (Ա. Վերանյան և Տ. Ղազարյան):

3. Շահառուների խորհուրդը

3.1 կետի վերաբերյալ Վ. Ենգիբարյանն առաջարկեց հանել «ծրագրի տարբեր ոլորտները ներկայացնող» բառակապակցությունը:

3.7 կետի վերջին պարբերության վերաբերյալ Լ. Ասատրյանն առաջարկեց հետևյալ ձևակերպումը «Էլեկտրոնային փոստով, արտահերթ նիստի գումարման ամսաթվից առնվազն 48 ժամ առաջ և բանավոր ծանուցման դեպքում՝ տվյալ արտահերթ նիստի գումարման ամսաթվից առնվազն 48 ժամ առաջ»:

Լ. Ասատրյանը հանդես եկավ նաև 3.8 կետի վերաբերյալ և առաջարկեց հանել վերջին նախադասությունը «Շահառուների խորհրդի նիստերում պահպանվում է քննարկվող հարցերի և տեղեկատվության գաղտնիությունը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով», որպեսզի չհակասի ՇԽ-ի բաց և թափանցիկ աշխատանքների կազմակերպման սկզբունքին:

3.13 կետում առաջարկվեց ՇԽ անդամներին տրամադրել 2 աշխատանքային օր ՇԽ արձանագրությունների նախագծերը դիտարկելու համար՝ նախատեսված մեկի փոխարեն (Ա. Վերանյան):

Հրավիրյալ Ա. Հովհաննիսյանն առաջարկեց հանել 3.14 կետը, քանի որ 3.5 կետում արդեն ընդհանուր նկարագրված է ՇԽ գործունեության ոլորտները:

Վերոնշյալ առաջարկություններով հանդերձ 3րդ գլուխը հաստավեց 11 կողմ և մեկ ձեռնպահ (Տ. Ղազարյան) ձայներով:

4. Շահառուների խորհրդի անդամների իրավունքներն ու պարտականությունները

4.1 կետի վերաբերյալ առաջարկություն եղավ հանել «ոչ պետական և ոչ առևտրային» բառակապակցությանը՝ ՇԽ անդամների ընտրությանը մասնակցության իրավունքի սահմանումը թողնելով ՇԽ ընտրակարգին:

Ա. Հովհաննիսյանն առաջարկեց 4.2 կետում հանել «ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրագործման բաղադրիչներից որևէ մեկի հանրային մոնիտորինգի իրականացման պատասխանատու» բառակապակցությունը, ինչպես նաև 4.3 կետում ավելացնել՝ «Նիստերի հաճախման արդյունքներն ամփոփվում և Շահառուների խորհրդին են ներկայացվում Շահառուների խորհրդի օգնականի կողմից՝ Շահառուների խորհրդի հաջորդ նիստի սկզբում»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 4.6 կետը կապված էր հաջորդող բաժինների քննարկումից և որոշումից՝ որոշվեց 4-րդ գլուխը հաստատել, բացառությամբ 4.6 կետի: 4-րդ գլուխը հաստատվեց միաձայն:

5. Շահառուների խորհրդի անդամի լիազորությունների դադարումը

5-րդ գլխի վերաբերյալ առաջարկություններ չեղան և հաստավեց միաձայն:

6. ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման խորհրդում քաղաքացիական հասարակությունից Շահառուների խորհրդի պատվիրակված անդամները

6.1 կետի վերաբերյալ նախագահողն առաջարկեց ՇԽ առաջին նիստը փոխարինել մեկ ամիս ժամկետով, սակայն հարցի շուրջ տեղի ունեցավ քննարկում և Ա. Վերանյանը հանեց իր առաջարկությունը: Նույն կետի վերաբերյալ Լ. Ասատրյանն առաջարկեց մեկ տարի ժամկետով բառակապակցությունը հստակեցնել:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե Կառավարման խորհրդի պատվիրակների ընտրությունը կատարել ՇԽ կազմից, թե ոչ, ծավալվեց բուռն քննարկում. ՇԽ անդամ Տ. Ղազարյանը նշեց, որ նպատակահարմար կլինեք ընտրությունը կատարել ոչ ՇԽ կազմից՝ հնարավորություն տալով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ավելի ընդգրկում

մասնակցություն ունենալ ծրագրի մասնակցային գործընթացին, ապահովել հավասարության պայմանները և հետևել Համաձայնագրի պահանջներին:

Լ. Բարսեղյանը նշեց, որ ՇԽ անդամություն երկու տարիների ընթացքում ինքն էլ է պաշտպանել այն մոտեցումը, որ ԿԽ անդամները պետք է ընտրվեն կամ դրսից (ոչ ՇԽ կազմից), կամ ԿԽ անդամ ընտրված ՇԽ անդամները պետք է դուս գան ՇԽ կազմից՝ իրենց տեղը զիջելով ցուցակով հաջորդող կազմակերպությունների ներկայացուցիչներին: Վերջին մոտեցումը պաշտպանեց նաև ՇԽ անդամ Լ. Ասատրյանը (ի դեպ, նա բազմիցս անգամ խոսել է այս հարցի շուրջ): Լ. Ասատրյանի կարծիքով սա հնարավորություն կտա ապահովել քաղաքացիական հասարակության ավելի լայն ընդգրկվածություն և ներկայացուցչություն, ծավալել կառուցողական աշխատանք՝ կապը չկտրելով ԿԽ պատվիրակների հետ:

Հարցի շուրջ եղան նաև այլ փաստարկներ, մասնավորապես Կ. Ջադոյանը նշեց, որ ՇԽ-ը և ԿԽ-ը մեկ մարմին է, ԿԽ անդամները ՇԽ պատվիրակներն են Կառավարման խորհրդում: Վ. Ենգիբարյանն էլ պաշտպանեց այն սկզբունքը, որ արդար չէ ԿԽ ընտրված անդամներին զրկել ՇԽ անդամությունից: ՀՄՀ-Հայաստանի տնօրենն էլ կողմնակից էր ԿԽ և ՇԽ անդամների շտարանջատելու սկզբունքին, քանի որ դա կարող էր տեղ տալ տարածայնությունների և անհամախմբվածության:

Ա. Վերանյանն առաջարկեց 6.5 կետը տեղափոխել 7րդ գլուխ:

Յրդ գլխի վերաբերյալ քվեարկությունը կատարվեց հետևյալ կերպ՝

6.1 կետը թողնել այնպես, ինչպես կա. 8 կողմ, 2 դեմ (Լ. Ասատրյան, Մ. Հովհաննիսյան), 1 ձեռնպահ (Նարինե Մախլյան), 1 հոգի չի մասնակցել քվեարկությանը (Տ. Ղազարյան):

6.4 կետը թողնել այնպես, ինչպես որ կա 8 կողմ, 1 դեմ (Լ. Ասատրյան), 1 ձեռնպահ (Ն. Մախլյան), 1 հոգի չի մասնակցել քվեարկությանը (Տ. Ղազարյան, Մ. Հովհաննիսյան):

Հաստատել ճիշտ բաժինն ամբողջությամբ, բացառությամբ 6.5 կետի. 10 կողմի և 2 հոգի չեն մասնակցել քվեարկությանը (Տ. Ղազարյան, Մ. Հովհաննիսյան):

Այնուհետև, քվեարկության դրվեց 4.6 կետը և հաստատվեց 8 կողմ, 3 դեմ (Տ. Ղազարյան, Մ. Հովհաննիսյան, Լիլիթ Ասատրյան) և 1 ձեռնպահ (Ն. Մախլյան) ձայներով:

7. Կառավարման խորհրդի անդամ/քաղաքացիական հասարակության ներկայացուցչի լիազորությունների դադարումը

Նոր կետի (6.5) ավելացմամբ 7-րդ գլուխ հաստատվեց 10 կողմ, 1 ձեռնպահ (Ա. Վերանյան) և 0 դեմ ձայներով:

8. Շահերի բախում

Ցրդ գլխի վերաբերյալ եղան երկու փոփոխություններ՝ 8.2 բաժնում ավելացնել «փոխկապակցված անձինք» բառակապակցությունը (Լ. Խաչատրյան) և 8.3 կետում «քաղաքացիական ծառայողներ» արտահայտությունը «պետական ծառայողներ» բառակապակցությամբ:

Շահերի բախման հարցերի վերաբերյալ հանդես եկավ նախագահող Ա. Վերանյանը և նշեց, որ ինքը ցանկանում է հայտնել իր հետ կապված այն տեղեկատվությունը, որ ԱյՍԻԴԻԱ/Վոկա կազմակերպությունից 2008թ. հուլիս ամսին գնել է 1.06 մլն դրամ արժողությամբ պտղի տեսակավորման սարքավորում: Ա. Վերանյանը խնդրեց գործընկերներին քննարկել այս դեպքը և հայտնել իրենց կարծիքը՝ արդյոք դա հանդիսանում է շահերի բախում, թե ոչ:

ՇԽ անդամները ընդունեցին ի գիտություն հայտնած տեղեկատվությունը:

9. Բնապահպանական դիտորդ

9.3-ում հստակեցնել ժամանակահատվածը (Լ. Ասատրյան), իսկ 9.4 կետում «նշանակել» բառը փոխել «ընտրել» բառով:

Վերջում, առաջարկություն եղավ ամբողջությամբ հաստատել կանոնակարգը (Մ. Հովհաննիսյան):

Այսպիսով, 8 կողմ, 1 դեմ (Լ. Ասատրյան), 0 ձեռնպահ ձայներով (երկու հոգի չմասնակցեցին քվեարկությանը՝ Տ. Ղազարյան և Մ. Հովհաննիսյան) ՇԽ վերանայված կանոնակարգը հաստատվեց:

Ժամանակի սպառման պատճառով նախագահողն հայտարարեց նիստը փակված:

Նախագահող՝

Ա. Վերանյան

Քարտուղար՝

Վ. Գրիգորյան

22-ր նոյեմբերի, 2008թ.